

ԲԱՆԱԿԸ... ԴԱՆԱԿ ՉԷ

Posted on November 16, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Իսկ Դանակը Երբե՛ք՝ Բանակ Մենք Ենք՝ Մեր Ցաւերը Շարքեն

Պարոյր Աղապաշեան Պէյրուզ, 18 Նոյեմբեր 2011

✘ Ազգային բանակը, ոչ միայն հայրենիքի, այլեւ *համայն* հայ ժողովուրդին համար, անխորտակելիութեան եւ հպարտութեան գրաւականն է, մանաւանդ՝ այս հանգրուանին, երբ Ատրպէյճան-Թուրքիա առանցքը, կը յաւակնի հայկական անգին հողամաս՝ Արցախը դարպասել, իր հազարումէկ նենգութիւններով ու մեքենայութիւններով:

Իսկ Դանակը Երբե՛ք՝ Բանակ Մենք Ենք՝ Մեր Ցաւերը Շարքեն

Պարոյր Աղապաշեան Պէյրուզ, 18 Նոյեմբեր 2011

✘ Ազգային բանակը, ոչ միայն հայրենիքի, այլեւ *համայն* հայ ժողովուրդին համար, անխորտակելիութեան եւ հպարտութեան գրաւականն է, մանաւանդ՝ այս հանգրուանին, երբ Ատրպէյճան-Թուրքիա առանցքը, կը յաւակնի հայկական անգին հողամաս՝ Արցախը դարպասել, իր հազարումէկ նենգութիւններով ու մեքենայութիւններով:

Ո՞վ պիտի պաշտպանէ հայապատկան Ղարաբաղը, որ իր շուրջ վեց հազար նահատակներով ազատագրուեցաւ ատրպէյճանական վոհմակներէ ու վերադարձած իր հարազատ զաւակներուն, որպէս հայրենի աշխարհի *անկախ* եւ *ինքնիշխան* միաւոր:

Ո՞վ տեր պիտի կանգնի այն Հայաստանին, որ հայ ժողովուրդի վերջին (բայց ոչ վերջնագոյն) հանգրուատեղին է, իր այսօրուան ու վաղուան յոյսերով, դէպի այն “ Մեծ Երագ”ը, որ կը կոչուի *ամբողջական* Հայաստան:

Բնական է եւ՝ արդար, որ ատիկա պիտի ըլլայ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ բանակը, իր ժողովուրդի զաւակներով, իրերայաջորդ սերունդներու պահակագունդերով, լիցքաւորուած նուիրեալ սահմանապահներով:

Սարդարապատեան հերոսական ճակատամարտի օրինակով, Արցախեան ազատագրական գոյապայքարի ուղիով ու հայապատկան իրաւունքներու երաշխիքով, հայ ժողովուրդը չի կրնար այլ ուղի ընտրել, չի կրնար այլ կողմնորոշում ունենալ, չի կրնար այլ ճակատագրի ենթարկուիլ, բացի դառնալէն՝ իր իրաւունքներուն տերը, իր ինքնութեան կրողը, իր դատին իրաւապաշտպանը:

Եթէ անկախութիւն համակարգը, պետականութիւն իրողավիճակը ու գերիշխանութիւն հասկացողութիւնը, ժողովրդային ու ժողովրդական, ժողովրդակարգային սկզբունքներով պիտի պահուին ու տնօրինուին, անոնց լաւագոյն ու գործնական դրսեւորումներով կը գտնուին բանակի *լիարժէքութեան* ու *լիակատարութեան* մէջ:

Պետութիւն-եկեղեցի, պետութիւն-հասարակութիւն, եկեղեցի-մտաւորականութիւն (կամ որեւէ այլ առընչութիւն), ի՞նչ իմաստ ու դերակատարութիւն կրնան ունենալ, այլեւ՝ ազդեցութիւն, երբ ԲԱՆԱԿԱՅԻՆ կառոյցը, իր գործնապաշտական, ժողովրդապաշտպանական ու հողապաշտպանական եութիւններով... չկայ:

Ուրեմն, բանակը, որպէս զինական, զինուորական ու զինապաշտպանական *ամրակոռ* ամրոց, ժողովուրդներու կեանքի, գործունեութեան ու պահպանութեան մէջ, հսկայական դեր ունի (եւ պիտի ունենայ):

Այս թռուցիկ, այլապէս անմիջական գրահպումները ստիպուած եղանք հրապարակագրական տողերով արտայայտելու, երկար տատանումներէ ետք, պարզապէս անոր համար որ, այս *թղթածրարը* խիստ վտանգաւոր ու փափուկ է, հայութենէն աւելի ուրիշներուն համար (յատկապէս թշնամի, բայց նաեւ... բարեկամ-թշնամի), որոնք կրնան, զանազան հաշուենկատութիւններով շահագործել զայն:

Նոր չէ, նորութիւն ալ չէ, ըսողը կամ գրողը մենք չենք, այլ՝ հայրենի պատկան կողմեր, նաեւ հայրենի մամուլը կամ լրատուական միջոցները:

Հայրենական բանակին մէջ տեղի կ'ունենան *անձնասպանական դէպքեր, խորհրդաւոր սպանութիւններ, մտահոգիչ արարքներ, ապառոջ երեւոյթներ* եւ “*հաշուեյարդար*”ի *պարագաներ*, որոնց առընչութեամբ կը կատարուին հարցաքննութիւններ... ճշդելու համար, թէ ինչո՞ւ տեղի կ'ունենան ասոնք, ո՞վքեր են մեղաւորները եւ ի՞նչ պատիժ կը սպասուի անոնց:

Այսքանը՝ հայրենի լրատուամիջոցները իրենք կը բացայայտեն, կը գրեն, կ'արձագանգեն, Սփիւռքն ալ, իր կարգին, կը վերարտադրէ զանոնք:

Շատեր կրնան ըսել թէ՛ այս բոլորին մէջ ի՞նչ կայ տարօրինակ, աշխարհի բոլոր բանակներուն մէջ կը պատահին նման դէպքեր եւ երեւոյթներ:

Բայց, ատոնք ի՞նչով կ'արդարացնեն որ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ մէջ պատահին, ապա հետաքննութիւնները շարունակուին եւ արդիւնքները... յամենան, այն աստիճան, որ “զոհ”երուն ընտանիքներն ու հարազատները, նախազահական պալատին առջեւ ցոյց ընեն, պատասխան փնտռեն, բայց, “*ծանօթ-անծանօթ*” դէպքերը շարունակուին, մինչ մատղաշ զօրակոչիկներ ու զինուորականներ, մէկ օրէն միւսը... մահանան:

Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար՝ Սէրան Օհանեանը, որուն ազգային-ազատագրական գործունեութիւններու ու մարդկային նկարագիրին մասին լաւ վկայութիւններ կան, ինչպէ՞ս կը բացատրէ այս, մեղմ ըսած, անհարթութիւնները, որոնք իր աչքին եւ ականջին առջեւ տեղի կ'ունենան...:

Հայաստանի անկախութեան 20րդ տարեդարձին առիթով, հայ ժողովուրդը (ի Հայաստան թէ Սփիւռս), նաեւ օտար դէտեր, քիչ մը զարմանքով, քիչ մըն ալ խրախուսանքով, դիտեցին հայ Ազգային Բանակին խրոխտ, կարգապահ ու մարտունակ զօրահանդէսը, այն բանակէն, որ հայ ժողովուրդին ապահովութեան, անվտանգութեան ու կայունութեան ապաւենն է:

Լա՛ւ, եթէ այն է հայ Ազգային Բանակը, այն է հայ ժողովուրդին պաշտպանութեան կռուանը, այն է հայ հողային իրաւատերութեան ռահվիրան, ո՞վ կրնայ մեզի բացատրել, թէ այդ նոյն Ազգային Բանակէն ներս ինչո՞ւ տեղի կ'ունենան այն ինչ որ կը լսենք ու կը կարդանք, հայրենի մամուլէն թէ այլ հաղորդակցական միջոցներէ:

Մեզի (եւ վստահաբար բոլորին համար), այլեւս անհանդուրժելի է լսել ու կարդալ, *“Հայաստանի (կամ Ղարաբաղի) բանակին մէջ, զինուոր մը եւս... անձնասպան եղած”*:

Եթէ ասիկա պարագայական կամ պատահական ըլլար, ոչի՛նչ, բայց այդպէս չէ, պարզապէս անոր համար, որ այդ տխուր երեւոյթները կը շարունակուին, մինչ հետաքննութիւնները կը քաշքշուին, իսկ ոմանք ալ կը խուսափին իրենց զաւակները որկելէ բանակային ծառայութեան...:

